



ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՑ ԿԸ ՅՈՒՍԱՅ, ՈՐ ԱՄՄԱՆԻ ՎԵՀԱԾՈՂՈՎԸ ԿԸ ՅԱՏԿԱՆՇՈՒԻ ՄԻՋԱՐԱԲԱԿԱՆ ԶՕՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՄՐԱՊՆԻՈՒՄՈՎ

Հանրապետության նախագահ Կոր. Էմիլ Լահուտ, յորդանանեան «Փերրա» լրատու գործակալության տուած հարցազրույցի մը մէջ, յոյս յայտնեց, որ Երեքշաբթի Ամմանի մէջ գումարող արաբական վեհաժողովը կը յատկանշուի «միջարաբական զօրակցութեան ամրապնդումով, որովհետեւ այս զօրակցութիւնը այսօր հրատապ կարիք դարձած է»:

Ան նաեւ ըսաւ, որ արաբ ղեկավարները պարտաւոր են հարապատօրէն արտայայտել իրենց ժողովուրդներու փափաքները, իղծերը եւ ձգտումը՝ միասնական կեցուածքի գծով, ընդդէմ արաբական աշխարհին սպառնացող վտանգներուն:

Նախագահը յիշեցուց, որ արաբական դատերը մեծ վնաս կրած են արաբներու անմիաբանութեամբ արաբական համար, ինչպէս որ պատահեցաւ Պաղեստինի եւ Լիբանանի պարագային:

Ան օրինակ բերաւ լիբանանցիները, որոնք իրենց միասնութեան շնորհիւ, Սուրիոյ օժանդակութեամբ եւ բանակին ու դիմադրութեան ճիգերով կրցան իսրայէլեան բռնազրաւումէն ապաստարել հարաւն ու արեւմտեան Պէքան:

«Լիբանան եւ Սուրիա կ'ենթարկուին քաղաքական եւ տնտեսական ճնշումներու, որպէսզի իրենց պարտադրուին մասնակի լուծումներ, հեռանալով արդար, ամբողջական եւ վերջնական խաղաղութեան գիծէն: Բայց Լիբանանի եւ Սուրիոյ հաստատական այս կեցուածքը փոխեց բազմաթիւ տուեալներ, եւ անոնք դարձան շրջանային տարապիւն մէջ դժուար թիւերը: Եթէ երկու արաբական երկիրներու միջեւ զօրակցութիւնը այս արդիւնքը տուաւ, հապա ի՞նչ պիտի ըլլայ համա-արաբական զօրակցութեան արդիւնքը», հարց տուաւ ան:

Նախագահը հաստատեց, որ խաղաղութեան գործընթացը դժուար կացութեան մատնուած է իսրայէլի կեցուածքներուն պատճառով, հետեւաբար մեծ է պատասխանատուութիւնը միջազգային ընտանիքին ու մասնաւորապէս Միացեալ Նահանգներու, Ռուսիոյ եւ Եւրոպական Միութեան, որոնք աւելի պիտի դեր պէտք է կատարեն խաղաղութեան գործընթացը յաջողցնելու Մատրիտի սկզբունքներուն ու միջազգային որոշումներուն հիման վրայ:

Ան նաեւ ըսաւ, որ արաբական միասնական կեցուածքը կը սահմանափակէ խուսանաւումներ կատարելու Իսրայէլի կարողութիւնը եւ յաջողութեան առիթ կ'ընծայէ խաղաղութեան բանակցութիւններուն վերականգնելու համար ի գործ դրուող ճիգերուն:

ՎԱՐՉԱՊԵՏ ԸԱՐԻՐԻ ԿԸ ԲՆՆԱԴԱՏԵ ԸԱԿԱՍՈՒՐԻԱԿԱՆ ԿԵՅՈՒԱԾՔՆԵՐԸ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի Շաբաթ գիշեր պատկերասփռուած հարցազրույցի մը մէջ յայտնեց, որ կը կարծէ, թէ ոմանք կը փորձեն Լիբանանի համայնքներուն միջեւ խլրտում ստեղծել, բայց Լիբանանի ժողովուրդը աւելի գիտակից է եւ նման սխալ չի գործեր:

Հարցուն մի պատասխանելով վարչապետը ըսաւ, որ «սարունիներու Մար Նասրալլա Պուրոս Սֆէյր պատրիարքը կը վերադառնայ իր հայրենիքը, եւ անոր ընդունելութեան հարցը կը վերաբերի մարդոց, որոնք կ'ուզեն անոր ընդունելութեան ներկայ գտնուելով արտայայտել իրենց կարծիքները: Կը մաղթէի, որ այս ընդունելութիւնը այլ կարգաբաժնու ներսար, բայց չեմ կարծեր, որ մաղթանքս պիտի

իրականանայ», ըսաւ վարչապետը եւ բացատրեց, թէ երկիրը կարիքը ունի համակեցութեան ամրապնդումին, ազգային հաշտութեան, բանակապետութեան եւ բարեացակամութեան կոչելու, բայց լիբանանեան բեմին վրայ կայ մագլցողական տրամադրութիւն, որ ոչ մէկ արդիւնք պիտի տայ, յատկապէս ինչ կը վերաբերի սուրիական ներկայութեան հարցին:

Հարիրի գոհունակութիւն յայտնելով վարչապետն չդիտարարեց, որ ոչ մէկ վերաբերեալ հարց, թէ չի բաժնէր անոր այն կարծիքը, թէ սուրիական ներկայութիւնը հոգատարութեան բնոյթ ունի:

Ան համոզում յայտնեց, որ ոմանք կը փորձեն միջհամայնքային

ԻՐԱՆԻ ԴԵՄՊԱՆԸ ԿԸ ՀԵՐՔԷ, ԹԷ ՀԸՉՊԱԼԼԱՅԻՆ ՀԻԹԻՌՆԵՐ ՀԱՍԱԾ ԵՆ

Իրանի դեսպան Մոհամէտ Ալի Սուպիանի հերքեց Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի այն յայտարարութիւնները, թէ Իրան հեռու հասողութեամբ հրթիռներ ուղարկած է ՀԸԿ-պայլախի:

Դեսպանը ըսաւ, որ սինական ղեկավարութեան համար իրաւապարտ ժողովուրդներու օրինական դիմադրութիւնը ահաբեկչութիւն է, մինչ իրենք Պաղեստինի եւ Լիբանանի մէջ գործած են ու կը գործեն անհնչ վայրագ ահաբեկչական արարքները, եւ նոյնիսկ Շարոն պէտք է միջազգային ատեաններու կողմէ դատաւարտուի որպէս պատերազմի ռմրագործ:

ԻՍՐԱՅԷԼ 15 ՔԻՐՏԵՐՈՒ ԱՆՑՔԸ ԿԸ ԴԻՐԱՑՆԵ ՍԱՅՍԱՆԱԳԻԾԵՆ

Երէկ յետմիջօրէին պաշտօնապէս յայտարարուեցաւ, որ Լիբանան բողոք ներկայացուցած է հարաւային Լիբանանի մէջ գործող ՄԱԿի խաղաղարար ուժերու հրամանատարութեան, որովհետեւ Իսրայէլ սահմանային Ղաժար գիւղի իրայատուկ պարագան օգտագործելով դիրքացուցած է 15 քիւրտերու ծրագրուած անցքը՝ սահմանէն:

ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՋ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ ԹԵՐԻ ԶԷ

Կ'ԸՍԷ ՆԱԽԱՐԱՐ ՔԱՆՍՕ

Աշխատանքի նախարար Ալի Քանսօ ըսաւ, որ ուսանողական շարժումներն ու ելոյթները Լիբանանի մէջ ազատութիւններու անհերքելի ապացոյցն են, եւ կը փաստեն, որ անհիմն են ոմանց այն արտայայտութիւնները, թէ Լիբանանի մէջ ազատութիւնները թերի կամ կաշկանդուած են:

«Այնուհանդերձ անհրաժեշտ է ազատութիւնները կապել հաւաքականութեան շահերուն, որովհետեւ ընդունելի չէ անկա օգտագործել ընդհանուր շահերուն դէմ խափանարարութիւն գործելու», ըսաւ նախարարը, ընդգծելով, որ արտաքին կողմերու հետ կապեր ունեցող լիբանանցիներ ազատութիւնը շահագործելով երիտասարդներ կը մղեն լիբանանեան պետութեան դէմ ճակատումի:

365 ՕՐԵՐԸՆ ՕՐ ՄԸ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅԻՆ  
Սոյն ձեռնարկին հետեւեալ ազգայինները կը ստանան օրուան մը ճաշի ծախսը՝ 300 տոլարով:  
- Տիար Հրաչ Խաչիկեան եւ Կառապետ, իրենց տիկնոջ եւ սօր՝ Պայծառ Խաչիկեանի մահուան քառասունքին առիթով:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ  
Չոյգ վեհափառներու առաջին անգամ միասնաբար դէպի Տէր Զօր Ապրիլ 24ին ուխտագնացութեան առիթով, ԱՇՃԵԱՆ ԹՈՒՐԶը կազմակերպած է բացառիկ յայտագիրով ուխտագնացութիւն մը, դէպի ՀԱԼԷՊ - ՏԵՐ ԶՕՐ - ՄԱՐԿՍԷ, նաեւ այցելութիւններ՝ ԹԸՏՄՈՐ (Փայմիր) եւ Գամակոս՝ 22 - 25 Ապրիլ:  
Շատ քիչ թիւով սենեակներ մնացած են պանդոկներուն մէջ. գին 99ՏԷՆ սկսեալ. յիշատակի նուէրներով:  
ԱՇՃԵԱՆ ԹՈՒՐԶ հեռ. 01-261177 - 240654 - 265068 - 03-233978, գիշերները՝ 01-258887:

ՄԱՀԱԶԳ  
Տէր եւ տիկին Մարտիկ Մատենեան եւ զաւակունք Տիկին Թերէզ Պուտաբեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Զաքար Մուրատեան եւ զաւակունք Օրիորդ Սօսի Մատենեան  
Տէր եւ տիկին Գասպար Գասպարեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Վարդան Պուտաբեան եւ զաւակունք Օգնական ընտանիք  
եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր եւ Հարազատին

ՎԱՐԴԵՆԻ ՄԱՏԷՆՃԵԱՆԻ  
մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 23 Մարտ 2001ին, Լոս Անճելէսի մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան:  
• Երկայն ընդունիլ իբրեւ մահապղ:  
• Յաւակցութիւնները կ'ընդունուին Երկուշաբթի 26, Երեքշաբթի 27 եւ Չորեքշաբթի 28 Մարտին, տիկին Թերէզ Պուտաբեանի բնակարանը, Պուրձ Համուտ, Սինէ Սանթրալի կից, «Աթոյեան» շէնք. Ա. յարկ:

ԻՍԱՄ ՖԱՐԵՆ ԿԸ ՀԱՄԱՅՅ ԱՐԱԲԱԿԱՆ ՎԵՀԱԾՈՂՈՎԻ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ

Փոխ վարչապետ Իսամ Ֆարէն յոյս յայտնեց, որ Ամմանի գերաստիճանը կը յաջողի ամրապնդել միջարաբական զօրակցութիւնը եւ գործնական քայլեր առնել արաբական հասարակաց շուկայի մը ստեղծման ուղղութեամբ:

Ան շնորհակալութիւն յայտնեց Արաբական Միացեալ Էմիրութիւններուն, որոնք յանձն առած են հարաւի պահանջներուն միջադատանքներու ֆինանսաւորումը, եւ յոյս յայտնեց, որ արաբական միւս երկիրները եւս տէր կը կանգնին Լիբանանի օժանդակելու իրենց յանձնառութիւններուն:

«ՆԱԽԱԾԱՇ»  
Կազմակերպութեամբ՝  
L.O.ԽԱԶԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ  
ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՆՈՒՄԲԻՆ  
Նախագահութեամբ՝  
ՏԻԿԻՆ ՌԷՆ-ՄԱՐԻ ՊԱՊԻԿԵԱՆ - ԲԻՈՒԱՆԻ  
Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 30 Մարտ 2001, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, «Տէնիսի» պանդոկի «Պերիթիւս եւ Թիր» սրահներուն մէջ:

ՄԱՀԱԶԳ  
Տիար Եսայի Կէօքեան եւ զաւակները՝ Գէորգ եւ Հրաչ Տէր եւ տիկին Վարդան Կէօքեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Լեւոն Կէօքեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Կարապետ Կէօքեան եւ զաւակունք Արուսեան ընտանիք  
Թաշեան ընտանիք  
Թրթոսեան ընտանիք  
Գագուսեան ընտանիք  
Փափազեան ընտանիք  
Քեհեայեան ընտանիք  
եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, մօր, մեծ մօր, քրոջ եւ Հարազատին՝

ԱԼԻՍ ԿԵՕՔԵԱՆԻ (Ծնեալ՝ ԱՐՈՅԵԱՆ)  
մահը, որ պատահեցաւ Շաբաթ, 24 Մարտ 2001, առաւօտեան ժամը 1:00ին, յետ կարճատեւ հիւանդութեան:  
Յուղարկուեցաւ Երեւանի արարողութիւնը կատարուեցաւ նոյն օրը, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Այնճարի Ս. Պօղոս եկեղեցւոյ մէջ, ուրկէ Հանգուցեային մարմինը փոխադրուեցաւ Այնճարի Ազգային գերեզմանատունը:  
• Երկայն ընդունիլ իբրեւ մահապղ:  
• Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեային բնակարանը, Այնճար:

Նախագահ Պաշար Ասատ իշխանութիւնը շուրջ տարի մը առաջ: Եւ ե՞րբ սկսաւ Սուրիոյ դէմ կեդրոնացած այս արշար. անոր իշխանութիւնը ստանձնելէն երկու ամիս ետք: Ինչո՞ւ, ի՞նչ տրամաբանութեամբ: Ասկա Շարը՝ էջ 10

ԾԱԽՈՒ ԲԱՊԻՆ  
• «Հոլիտէյ Պիչ»-ի մէջ, հեռ. 262123 եւ 257255:

ԿՈՒԶՈՒԻ  
• Աղամանդաշարներ: Հեռաձայնել երեկոյեան ժամը 7:00էն ետք, 03 - 954741 թիւին:

ՇԱԽՈՒ Է  
• Տիպիկէս յարկաբաժն. ամրան եւ ձմրան համար, 220 քառ. մէթր, կահաւորուած, Նոր Ֆէյթրուճ Սաթելիթ, 3 հիւրասրահ, 2 ճաշարան, կահաւորուած եւ մեծ խոհանոց լման կազմով, կրակարան, 2 պատշգամ տեսարանով, կողքին 3 ճնշասնեակ, 3 խաղասնեակ 2 պատշգամով, 3 կառնատուն: Անմիջական կամճում:  
Եռանձայնել առաւօտեան ժամը 9:00էն 15:00, 01-345205 թիւին եւ ժամը 15:00էն 21:00, 03-220328 կամ 09-640581 թիւերուն, Փորթթիլի: Սերտուած գին:

ՀՐԱԻԲ  
Ուրֆայի Հայր. Միութեան վարչութիւնը կը հրաւիրէ իր սիրելի ժայռեակցիները անդամական ընդհանուր ժողովի, որ տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի, 28 Մարտ 2001, երեկոյեան ժամը 7:30ժն. միութեան սրահին մէջ: Օրակարգ.  
- Նախորդ վարչութեան երկամեայ գործունեութեան միջաբանական գեկուցում:  
- Նոր վարչութեան ընտրութիւն:  
Հայրեակցիներուն ներկայութիւնը խիստ փափաքելի է:  
3.9.- ժամը 8:00ին ներկաներու թիւը մեծամասնութիւն կը համարուի:  
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Հ. Բ. Ը. Մ. Հ. Ե. Ը.  
«ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶԵԱՆ» ԹԱՏԵՐԱՆՈՒՄԲԸ  
Կը ներկայացնէ  
ԹԵՆԸՍԻ ՈՒՐԻԻԸՍՄԻ  
ՄԵՆԱԿՈՒԹԵԱՆ ՎԵՐՉԻՆ ԿԱՆԳԱՌԸ  
(A STREETCAR NAMED DESIRE)  
Բնադրութեամբ հայրենի վաստակաւոր բնամարի: Եւ պետական մրցանակի դափնեկիր՝  
ՓՐՈՖ. ԵՐՈՒԱՆԴ ՂԱԶԱՆՃԵԱՆԻ  
Տեղի պիտի ունենայ 22, 23, 24, 25, 29, 30, 31 Մարտ եւ 1 Ապրիլ 2001, երեկոյեան ժամը ճիշդ 8:30ժն, «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ:

1700ԱՄԵԱԿԻ ՃԱՄԲՈՎ ՈՒԽՏԻ ԹԱՓՕՐ ԴԷՊԻ ԱՆԹԻԼԻԱՍ  
Գլխաւորութեամբ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ԸԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ ԿԻՐԱԿԻ, 1 ԱՊՐԻԼ 2001, ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՍԸ 7:30:

# ՓՈՒԹԻՆ - ՄՈՐԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ



Փութին և Մորի

ԻՐՔՈՒՅՔ, 25 (ՌՈՅԹԸԸԸԸ).- Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին և ձափոնի վարչապետ Եռչիբո Մորի Կիրակի օր որոշած են կրկնապատկել ճիգերը՝ չորս կողմերու գծով ծայր տուած բանավէճին վերջ տալու համար: Բանավէճին պատճառով յետպատերազմեան խաղաղութեան համաձայնագիր մը ցարդ չէ կնքուած:

Միայն Պայքալ լիճին մտակալ Իրքուցք քաղաքին մէջ չորս ժամ տեւողութեամբ հանդիպումէն ետք, երկու ղեկավարները գովասանքով արտայայտուած են իրարու մասին:

Միացեալ յայտարարութիւն մը յայտնեց, թէ համաձայնագիր մը ապահովելու համար ապագայ ճիգերը նկատի պիտի ունենան Բ. Աշխարհամարտէն ետք գոյացած բոլոր համաձայնութիւնները, ներառեալ՝ 1956ի մէկ յայտարարութիւնը, ուր Ռուսիա ընդունած է չորս կողմերէն երկուքը վերադարձնել՝ համաձայնագիրի մը կնքումէն ետք:

Կողմերը խորհրդային ուժերուն կողմէ գրաւուած են Բ. Աշխարհամարտի վերջին օրերուն: Անոնց շուրջ ծայր տուած բանավէճը երկու երկիրներուն մէջ ազգայնական զգացումներուն թափ տուած է:

Փութին մամուլի ասուլիսի մը ընթացքին յայտնած է, թէ յայտարարութիւնը «ղէպի առաջ նոր քայլ մըն է՝ Ռուսիոյ և ձափոնի միջեւ գործակցութեան հաստատման ճամբուն վրայ»:

Մորի ըսած է, թէ բանակցութիւնները «ցարդ չտեսնուած երկկողմանի հասկացողութեան» դուռ բացած են:

## ՊԱԼՔԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

# ԹԵԹՈՎՈՅԻ ԲԱԽՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ. ՄԱԿԵՂՈՆԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ՅԱՌԱՋԻԱԴԱՅՔ ԿԱՐՁԱՆԱԳՐԷ

Մակեդոնական բանակը երէկ Թեթովոյի շուրջ բոլոր մը գրաւած է, եւ մղելով ծագումով ալպանացի զինուորայինները:

Անոնք ծանր կրակոցներու ենթարկուած են, սակայն կանոնաւոր յետմիջօրէին կրցած են բոլորի մը գագաթը հասնիլ՝ հրասայլերու եւ զրահապատ կառքերու կարաւանով մը:

Ըստ քաղաքին հիւանդանոցին տնօրէնին, ոստիկան մը եւ ալպանացի չորս քաղաքայիններ վիրաւորուած են կորսուած փամփոռ տնէրու պատճառով:

Առաջին անգամ ըլլալով էր, որ կառավարական ուժերը ցամաքային յարձակումի մը կը ձեռնարկէին ըմբոստ զինեալները բոլորներու վրայ իրենց դիրքերէն ետ մղելու համար: Անոնք 12 օրէ ի վեր այդ դիրքերուն վրայ կը գտնուէին:

Երէկուան յարձակողականը տեղի ունեցած է հակառակ աշխարհի բազմաթիւ ղեկավարներու կոչերուն, որ Մակեդոնիա զսպուածութիւն ցուցաբերէ ըմբոստներուն հետ իր վարուելակերպին մէջ: Այս վերջինները կ'ըսեն, թէ պայքար կը մղեն երկրին ալպանացի փոքրամասնութեան յաւելեալ իրաւունքներ ապահովելու համար:

Ե. Միութեան պաշտպանութեան մարզի պատասխանատու խոսքի մը միջոցով կ'ըսուի, որ Մակեդոնիան օրաթերթի մը



Մակեդոնական բանակը տարածման պահուն

յայտնած է, թէ նախափոխուած են՝ ՕԹԱՆ-եան հաւանութիւնը ստացած գործողութեան մը ծիրէն ներս, որուն նպատակը զգուշացման հրաւիրել է շրջանին մէջ գտնուող ծագումով ալպանացի զինեալները:

### ԵՆՈՒԿՈՍԱԿ ՌԻՇԵՐ ԶԵՂՈՔ ԳՕՏԻ ԿԸ ՄՏՆԵՆ

Միւս կողմէ, երկուսուսուս բանակայիններ եւ սերպ ոստիկաններ երէկ Քոսովոյի շրջակայ չէֆոք գօտիի մը լայնածիր

մէկ շրջանը տեղափոխուած են՝ ՕԹԱՆ-եան հաւանութիւնը ստացած գործողութեան մը ծիրէն ներս, որուն նպատակը զգուշացման հրաւիրել է շրջանին մէջ գտնուող ծագումով ալպանացի զինեալները:

Անոնք չեն հաստատուած այն վայրերուն մէջ, ուր կ'ենթադրուի, թէ ըմբոստներ գործօն են: (ՌՈՅԹԸԸԸԸ)

## ԱՅԳԱՆԻՍԱՆ

# ԸՆԴԴԻՄԱԴԻՐՆԵՐԸ ՄԵԾ ԲԱՆԱԿ ԿԸ ԿԱԶՄԵՆ՝ ԿՈՒՒԵԼՈՒ ԹԱԼԵՊԱՆԻ ԴԵՄ

ԻՍԼԱՄԱՊԱՏ, 25 (ՌՈՅԹԸԸԸԸ).- Աֆղանիստանի ընդդիմադիր ճակատը քսան հազար զինուորի կազմուած բանակ մը կը պատրաստէ, թափ տալու համար Թալեպան իսլամական շարժումին դէմ իր կռիւին, յայտնեց ընդդիմադիր ճակատի մէկ բանբերը Կիրակի օր:

Բանբերը ըսաւ, որ ընդդիմադիր ճակատի ուժերը, զորս կ'առաջնորդէ Ահմէտ Շահ Մասուտ, բանակին մաս պիտի կազմեն Աֆղանիստանի այլապէս ցեղախումբերէ զինեալներ: Բանբերը աւելցուց, որ զինեալներու խումբերը պիտի ուղարկուին Թալեպանի դէմ բացուած ճակատները: Ան ըսաւ նաեւ, որ զինեալները կամաւոր կերպով կը միանան ընդդիմադիր բանակին եւ թէ անոնց մեծ մասը մարզումի ենթարկուած է ձմրան եղանակին:

**ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՔՈԼԵԾ ՏԻԿՆԱՆՑ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՐՄԻՆ**

**ԶԱՏԿՈՒԱՆ ՊԱԶԱՐ - ՃԱՇ - ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ**

**ՏԻԿԻՆ ԳԱՅԻԱՆԷ ԹԱՇՃԵԱՆ**  
**INSTITUT KAYANE**  
 Պիտի խօսի՝  
 ԵՐԵՄԻ ՄՈՐԹԻ ԽՆԱՄՔԻ ՄԱՍԻՆ

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 6 Ապրիլ 2001, կէսօրէ առաջ ժամը 10:30ին, Հայ Աւետ. Ա. Եկեղեցոյ հանդիսասրահին մէջ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՑՄԱՆ 1700ԱՄԵԱԿ (301-2001)**

Կազմակերպութեամբ  
 Հայ Կաթողիկէ Երիտասարդաց Միութեան  
 Հովանաւորութեամբ  
**ԱՐՀԻ. Տ. ՊԵՏՐՈՍ ԱՐՔ. ՄԻՐԻԱԹԵԱՆԻ**  
 Դասախօսական շարք  
 «Ճանչնանք Մեր Եկեղեցին»  
 Բանախօս  
**Հ. ԱՆԴՐԱՆԻԿ Ծ. Վ. ԿՈՍՏԵԱՆ**  
 (Լիբանան)

Տեղի կ'ունենայ երեկոյեան ժամը 8:30ին Ս. Երրորդութիւն (Չուարթոնց) եկեղեցոյ ԱԳԱՃԱՆԵԱՆ սրահին մէջ, Մէլտան, Հալէպ:

- ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՆԻԻԹԵՐ
  - Երեքշաբթի, 27 Մարտ 2001. «Քրիստոնէութեան մուտքը Հայաստան»
  - Չորեքշաբթի, 28 Մարտ 2001. «Հայ Կաթողիկէութեան ծագումը»
  - Հինգշաբթի, 29 Մարտ 2001. «Հայ Կաթողիկէ եկեղեցին այսօր եւ ապագայի հեռանկարներ»

Վազմակերպութեամբ՝  
 ԼՕԻԻ Շրջանային Վարչութեան  
 Առողջապահական Յանձնախումբին  
 և Ա. Պոպոզովիչի  
 Երբ...  
 Ի՞նչ...  
 և Ինչո՞ւ Կ'ուտենք  
 Կը Դասախօսուի՝  
**Սննդականոնի Մասնագէտ Օրդ. Գարու Եարտըմեան**  
 Տեղի կ'ունենայ Երեքշաբթի 28 Մարտ 2001ի, առաւօտեան ժամը 10:30ին, ԼՕԻԻ Ա. Պոպոզովիչի «Թնճուկեան» սրահին մէջ, 4-րդ յարկ:

## ՌՈՒՍԻԱ

# ԱԿԱՆՈՒԱԾ ԵՐԵՔ ԻՆՔՆԱՇԱՐԺՆԵՐՈՒ ՊԱՅԹՈՒՄ. 21 ՉՈՂ ԵՒ 140 ՎԻՐԱԻՈՐ

Ռուսիոյ մէջ Շաբաթ օր 21 հոգի սպաննուած է եւ աւելի քան 140 ուրիշներ վիրաւորուած են սկանուած երեք ինքնաշարժերու պայթումին պատճառով: Պայթումները տեղի ունեցած են Չէչենիոյ մտակալ հարաւային հանրապետութիւններու մէջ:

Ռուս պաշտօնատարներ արագօրէն պայթումները կապած են չէչէն զինեալներու, իսկ նախագահ Վլատիմիր Փութին յայտարարած է, թէ պայթումներուն պատասխանատուները պիտի պատժուին:

«Ամէնէն իմա միջոցառումներուն պիտի դիմուի գտնելու եւ պատժելու համար անոնք՝ որոնք հրահանգած են գործադրած են այս քսանմէկի մարդասպանութիւնները», ըսած է ան զոհերուն պարագաներուն յղուած ցաւակցագիրի մը մէջ:

19 հոգի սպաննուած եւ աւելի քան 100 հոգի վիրաւորուած է, երբ սկանուած ինքնաշարժ մը պայթած է Սթարոփոլի շրջանին մէջ Միներալիէ Վոտի քաղաքին բանուկ մէկ շուկային մէջ:

Մտակալ Բարաչաեւ - Չերքեսիա հանրապետութեան մէջ ռումբերու մասնագէտ 2 ոստիկաններ սպաննուած են՝ ինքնաշարժի մը մէջ լարուած ակնայն չէֆոքացնելու ընթացքին:

12 հոգի վիրաւորուած է, երբ երրորդ ռումբ մը պայթած է Սթարոփոլի Եսենթուքի քաղաքին մէկ ոստիկանատան մօտ, առաջին պայթումէն կարճ ժամանակ ետք:

Փութինի խորհրդատու Ապահովութեան Խորհուրդի քարտուղար Սերգէյ Իվանով հաւանական նկատած է, որ չէչէն ըմբոստներ ձեռնարկած են յարձակումներուն, առ ի պատասխան՝ անջատողական շրջանին մէջ կարգ ու կանոն հաստատելու Մոսկուայի ճիգերուն:

Ըմբոստները համացանցի միջոցաւ պայթումներուն լուրը հաղորդած են առանց ստանձնելու կամ հերքելու անոնց պատասխանատուութիւնը:

(ՌՈՅԹԸԸԸԸ)

**«ԱՆԹԻԼԻԱՍԻ ՌԻՍՏԻ ՕՐ»**

Ս. Գրիգոր Լուսաւորիչի Մուտն ի Վիրապ տօնին՝ «ԱՆԹԻԼԻԱՍԻ ՌԻՍՏԻ ՕՐ»-ուան առիթով, Անթիլիասի Մայր տաճարին մէջ տեղի պիտի ունենան հետեւեալ արարողութիւնները:-

- Շաբաթ, 31 Մարտ, առաւօտեան ժամը 9:30ին Ս. պատարագ:
- Նոյն օրը, երեկոյեան ժամը 7:00ին, հսկումի արարողութիւն՝ ի պատրաստութիւն յաջորդ օրուան ուխտաւորութեան:
- Կիրակի, 1 Ապրիլ, Սուրբ եւ անմահ պատարագ, որուն պիտի հետեւի Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒԻՍԱՆՈՐԻԶԻ ԱԶՈՎ զիլաւորուած սրբապան մասունքներու թափօրը՝ Անթիլիասի Մայրավանքի շրջակային մէջ, մասնակցութեամբ միաբան հայրերուն եւ քահանայից դասուն:

Պիտի պատարագէ եւ պիտի քարոզէ **ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ** (Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմին)

Արարողութեանց եւ թափօրին պիտի հանդիսապետէ **Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ**

Ժամերգութիւն	Ժամը 8:30ին
Պատարագ	Ժամը 10:00ին
Քարոզ	Ժամը 11:00ին
Ս. Աջերու եւ այլ մասունքներու թափօր	Ժամը 11:30ին

Կը հրաւիրենք մեր ժողովուրդի բոլոր պատկանները՝ մասնակից դառնալու Ս. Գրիգոր Լուսաւորիչի Ուխտի Օրուան:

**ԴԻՒԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ**

**ԼԻԲԱՆԱՆԱԳԱՅ ԱՍԱՆԱԲՈՒԹՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ - ADAL**

**ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ**

Նիւթ՝  
 A review of daily oral pathology for the general practitioner: Presentation of cases and discussion presented by **DR. ZIAD NOUJEIM** (Senior lecturer of the Lebanese University)

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 30 Մարտ 2001, երեկոյեան ժամը 7:00ին, Հայ Բժիշկներու Միութեան տան մէջ, Մար Մըխայէլ:

- Հիրաւիութիւն

Sponsored by **GILETTE COMPANY (COLOMBUS)**













### ՊԱՔՈՒ ԻՐ ՀՈՂԵՐՈՒՆ...

Շարունակուած Ա. Էջէն

Անդրադառնալով Հայաստանի եւ Ազրպէյճանի նախագահներուն միջեւ Քի Ուէյթի մէջ (Ֆորթիտա, Մ. Նահանգներ) 3 Ապրիլին կայանալիք հանդիպումին, Կուլիբեկ ըսաւ, որ այդ բանակցութիւնները որեւէ արդիւնքի պիտի չյառնեն: Կուլիբեկի համաձայն, Մոսկուա պիտի օգտագործէ լրտեսական գետնի վրայ ուսումնասիրական յարաբերութիւններու մէջ ստեղծուած լարուածութիւնը՝ խանգարելու համար հայ-ազրպէյճանական բանակցութիւններու արդիւնաւէտ աւարտը: Մ. Նահանգներու մէջ:

● ԱԶՐՊԵՅԻՅԻՆ արտաքին գործոց նախարար Վիլյամ Կուլիբեկ Շարաթ օր տուած մամուլի ասուլիսի մը ընթացքին յայտնեց, որ Ազրպէյճանի հողերուն վրայ թրջական կամ ՕՐԱՆի գինեւորական խարխիւներու հաստատման գաղափարը «չինչ է»:

«Եթէ պետութիւն մը, որ այլ պետութեան հողերը գրաւած է, իր հողերուն վրայ գինեւորական օտար խարխիւներ ունի, ապա Ազրպէյճան եւս նմանօրինակ միջոցառումներու պէտք է դիմէ», ըսաւ ան: Կուլիբեկ ըսաւ, որ Պաքոն պէտք է այս ուղղութեամբ իր աշխատանքները աշխուժացնէ:

Անդրադառնալով Քի Ուէյթի հանդիպումին, Կուլիբեկ անհաւանական նկատեց, որ որեւէ համաձայնագիր կնքուի՝ Լեռնային Ղարաբաղի հարցին լուծման ուղղութեամբ: Կուլիբեկի համաձայն, ընդհանուր սկզբունքներու մասին մտքերու փոխանակում տեղի պիտի ունենայ:

● ԱԶՐՊԵՅԻՅԻՆ նախագահ Հայտար Ալիբեկ որդին իր համար Ալիբեկ ըսաւ, որ ինք ամբողջութեամբ դէմ է Ազրպէյճանի մէջ գինեւորական օտար ներկայութեան: Անդրադառնալով Քի Ուէյթի հանդիպումին, Կուլիբեկ ըսաւ, որ որեւէ հանդիպում արդիւնք մը կ'ունենայ: «Անհրաժեշտ է, որ ամէն ինչ աւարտի համաձայնագիրներու կնքումով: Երկխոսութիւնը եւ տեսակէտներու փոխանակումը եւս արդիւնք մըն է»:

ԱԶՐՊԵՅԻՅԻՆ նախագահ Ապուլֆազ Էլչի պէյի խորհրդական Հասան Կուլիբեկ նշեց, որ նախագահ Հայտար Ալիբեկ կեցուածքը վերջին մէկ ամսուան ընթացքին փոխուած է:

Հասան Կուլիբեկի համաձայն, երբ կը հետեւինք վերջին մէկ ամսուան ընթացքին Ալիբեկ արտասանած խոսքերուն, կը նկատենք, որ անոր շեշտը փոխուած է: «Ազրպէյճանի խորհրդարանին մէջ իր ելույթին մինչեւ 10-15 օր ան կը խօսէր Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ լուծման մասին: Սակայն ներկայիս ան աւելի համակրելի իր կողմնակից, որոնք համաձայն են հարցին գինեւորական լուծման տարբերակին»:

Փարիզի մէջ նախագահ Քոչարեանի հետ իր հանդիպումին ետք Ալիբեկ հնգօրեայ այցելութեան մը համար թուրքի մեկնեցաւ:

Մամուլին համաձայն, հանդիպումներու օրակարգին հիմնական հարցը Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը եղած է: Սակայն հակառակ Անգարա կատարած իր նախին այցելութիւններուն, այս անգամուան այցելութիւնը խիստ խորհրդապահական էր:

Պաքոն վերադառնալէ ետք Ալիբեկ մեթոծ է մեկնաբանութիւններ կատարել Անգարայի մէջ ունեցած իր հանդիպումներուն արդիւնքներուն մասին: 2. Կուլիբեկի համաձայն, Թուրքիոյ մէջ Ալիբեկ բանակցութիւնները յատկանշական դերակատարութիւն ունեցած են անոր կեցուածքի փոփոխութեան մէջ (Թէեւ ասիկա միակ բացատրութիւնը չէ):

Անցեալ շաբաթ թրջական «Էւ. Թի. Վի.» պատկերասփիւռի կայանին հետ հարցազրոյցի մը ընթացքին, Ալիբեկ կոչ ուղղած էր Թուրքիոյ հետ գինեւորական գործակցութեան ընդլայնման: Ան ըսած է, որ ինք պիտի ողջունէ Ազրպէյճանի մէջ թրջական գինեւորական խարխիւի մը հաստատումը:

Անցեալ շաբաթ Թուրքիոյ եւ Ազրպէյճանի գինեւորական ղեկավարութեան միջեւ տեղի ունեցած է բաւական աշխուժ հանդիպումներ: Թուրքիոյ բանակի սպայակոյտի պաշտօնատարներէն զօր. Նապիթ Թասուլէր Պաքոն մէջ հանդիպում ունեցած էր Մ. Ապիբեկի հետ: Իր կարգին, Ապիբեկ Անգարա այցելած է, ուր Ազրպէյճանի պաշտպանութեան նախարարութեան եւ Թուրքիոյ բանակի սպայակոյտին միջեւ կնքուած է գինեւորական գործակցութեան մասին համաձայնագիր:

● ՄՈՒՍՈՒՄԻՆ Կուսակցութեան նախագահ Իսա Ղամպար յայտնեց, որ եթէ Ալիբեկ - Քոչարեան հանդիպումին իբրեւ արդիւնք Մ. Նահանգներու մէջ կնքուի Ազրպէյճանի ազգային շահերուն հակասող փաստաթուղթ, ապա ազգային ժողովրդական ուժերը պիտի չի՞նչ արտաբերեն, որ համաձայնագիրը գործադրուի:

Ան ըսաւ, որ բանակցութիւններուն իբրեւ արդիւնք պէտք է «ազատագրուին գրաւեալ հողերը»: Ղամպար շեշտեց, որ Ազրպէյճան աւելի հետեւողականօրէն պիտի ամրապնդէ Թուրքիոյ հետ իր կապերը եւ առաւելագոյնս պիտի օգտագործէ իր դաշնակիցին կարելիութիւնները:

### ՎԱՐՉԱՊԵՏ ԸԱՐԻՐԻ...

Շարունակուած 2րդ էջէն

ընդունելի չէ մանաւանդ, որ ես գիտեմ, թէ Պաշար Աստ որբան լայնախոն է եւ պատրաստ՝ բոլոր լիբանանցիներուն հետ երկխոսութեան, ինչպէս որ պատահեցաւ Սուրիոյ մէջ արգելափակուածներու ապստարակման գծով», ըսաւ Հարիրի:

Հրպայիսի առաքուած վէսթերուն մասին իրարայեւան յայտարարութիւններուն գծով վարչապետը ըսաւ, որ Իսրայէլի վէսթերը անպակաս են եւ անիկա կը մերժէ Միջին Արեւելքը հաւաքական կործանումի վէսթերէ վերջ դարձնելու համաձայնագիրը:

Վարչապետը ըսաւ, որ չի կարծեր, թէ շրջանին մէջ պատերապսներ պիտի սղուին, որովհետեւ մեծ պետութիւնները նման բան պիտի չընդլայնեն, նկատի առած որ արաբական կողմը խաղաղութեան կը ձգտի:

### ԵՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵՆՄԵՐՈՎԸ ԱՄԱՐՏԵՅԱԻ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ

Ե. Միութեան ղեկավարները Շաբաթ օր աւարտած են երկօրեայ իրենց վեհաժողովը, խոստանալով թափ տալ բարեկարգումներուն, այլընտրանքով իրենց անհրաժեշտ դարձնելու համար աշխարհի տարածքին մրցակցութեան ոգի ցուցաբերող մեծագոյն տնտեսութիւնը, սակայն անոնք միաժամանակ խոստովանած են, թէ Երոպայ չի կրնար ամբողջովին խուսափիլ ընդհանրական դանդաղեցումի պարագային:

Շուիտի վարչապետ Կորան Փիլսոն, որ վեհաժողովը հիւրընկալած է, յայտնած է, թէ ժողովը չէ կրցած իրագործել առաջադրուած ամէն ինչ:

«Ամբողջական յաջողութիւն մը չէր, սակայն ճիշդ ուղղութեամբ յառաջիկայը մը, ըսած է ան, մասնաւորապէս մը ընթացքին: «Վեհաժողովը կառուցալին բարե-

կարգումներու գծով քայլեր առաւ, սակայն ընելիք շատ բան կը մնայ», աւելցուցած է ան:

Անցեալ Դեկտեմբերին տեղի ունեցած Նիսի վերջին վեհաժողովին ղեկավարները վեճեր ունեցած էին բարեկարգումներու մասին, որոնք անհրաժեշտ են Ե. Միութեան ընդարձակման համար: Սթրախովի բանակցութիւնները նուազ վիճելի եղած են, սակայն ղեկավարները յայտնած են, թէ կատարելիք մեծ աշխատանք կը մնայ:

Ղեկավարները, վեհաժողովին բխած հարցերը գործուցելու մը մէջ, վերահաստատած են Ռուսիոյ հետ աւելի սերտ կապեր հաստատելու իրենց փափաքը, կոչ ուղղելէ ետք Սթրախովի այցելող նախագահ Վլադիմիր Փուրիսի, որ գործադրէ իր երկրին մէջ տնտեսական բարեկարգումներու ծրագիրը:

ը եւ Չեչենիոյ տագնապը քաղաքական միջոցներով լուծէ: Անոնք խոստացած են Կորպորացի կանգնի Առեւտուրի Համաշխարհային Կապմակերպութեան անդամակցելու Ռուսիոյ ճիգերուն, ինչպէս նաեւ համաձայնած են արտօնել Երոպայի ներդրումներու Գրամատան, որ փոխտնտեսութիւն կատարէ Ռուսիոյ կենսոյոյ կապուած ծրագիրներու համար:

Անոնց հաղորդագրութիւնը նաեւ խոստացած է գործուցել Կորպորացի ցուցաբերել Միջին Արեւելքի եւ Պայքանեան շրջանին մէջ խաղաղարար ճիգերուն հանդէպ: Միւս կողմէ, անոնք որոշած են Փիլսոնը Հիւսիսային Քորէա գործուղել՝ քորէական բաժնուած թերակղզիին վրայ խաղաղութեան գծով տրիպտիկ թափ տալու համար: (ՌՈՅԹԸՐԸ)

### ՊՈՒՇ ԿՈՒՋԷ ԿԻՊՐՈՍԻ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼ

Մ. Նահանգներու նախագահ Ճորձ Պուշ շաբաթավերջին կոչ ուղղած է Կիպրոսի հարցը լուծելու համար ՄԱԿի ճիգերուն արագօրէն վերսկսելու:

Յունաստանի անկախութեան օրուան առիթով տեղի ունեցած հանդիսութեան մը ընթացքին, Պուշ յայտնեց, որ ինք կ'ուզէր տեսնել Մ. Նահանգներ Յունաստանը «բարեկամ մը» կը նկատեն: Ան գոհունակութիւն յայտնած է Մ. Նահանգներու եւ Յունաստանի միջեւ յարաբերութեան արագացումը:

Պուշ յայտնած է, թէ Մ. Նահանգներ Յունաստանը «բարեկամ մը» կը նկատեն: Ան գոհունակութիւն յայտնած է Մ. Նահանգներու եւ Յունաստանի միջեւ յարաբերութեան արագացումը:

ՄԱԿի նորագոյն նախաձեռնութիւնը, որուն ընթացքին երկու կողմերը քանի մը առիթներով անուղղակի բանակցութիւններ ունեցած են, անկէ կարողութեան մատուցած է:

ՄԱԿի բանաձեւերը կոչ կ'ուղղեն, որ կղզին վերամիասնաւ իբրեւ մէկ պետութիւն երկու գօտի - երկու համայնք դաշնակցութեան մը մէջ: Յոյն կիպրացիք կը մերժեն այլ բան քննարկել:

Մ. Նահանգներու նախագահ Ճորձ Պուշ շաբաթավերջին կոչ ուղղած է Կիպրոսի հարցը լուծելու համար ՄԱԿի ճիգերուն արագօրէն վերսկսելու:

Յունաստանի անկախութեան օրուան առիթով տեղի ունեցած հանդիսութեան մը ընթացքին, Պուշ յայտնեց, որ ինք կ'ուզէր տեսնել Մ. Նահանգներ Յունաստանը «բարեկամ մը» կը նկատեն: Ան գոհունակութիւն յայտնած է Մ. Նահանգներու եւ Յունաստանի միջեւ յարաբերութեան արագացումը:

### ՌՈՒՄ - ՎՐԱՑԱԿԱՆ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Վրաստանի պաշտպանութեան նախարար Կոր. Տաիտ Թեվկաթե շաբաթավերջին Մոսկուա մեկնեցաւ, մասնակցելու համար ռուս-վրացական պինտրական բանակցութիւններու վեցերորդ նիստին:

Նախարարութեան աղբիւր մը յայտնեց, որ Վրաստանի նախագահ էտուարտ Շեարտնաձէի, կառավարութեան եւ խորհրդարանի ներկայացուցիչներու եւ Թեվկաթեի միջեւ տեղի ունեցած խորհրդակցական հանդիպումներէն ետք որոշեցաւ, որ ռուս - վրացական բանակցութիւններուն թիֆլիս պնդէ Պաքոնի եւ Սախալայի մէջ հաստատուած ռուսական խարխիւներու աւելի կանուխ պարունակի վրայ:

Նախորդ բանակցութիւններուն, ռուսական կողմը ըսած էր, որ 15 տարի կ'ուզէ. որպէսզի դուրս գայ այդ խարխիւներէն, սակայն վրացական կողմը կը պնդէ, թէ երեք տարի բաւարար է: Բանակցութիւններուն պիտի քննարկուին նաեւ Վալիանիի եւ Կուսուրայի մէջ ռուսական խարխիւներու իրավիճակին անջնջող հարցեր: Նոյն մեր 1999ին ԵԱՀԿ Պոլսոյ վեհաժողովին կնքուած համաձայնագրին համաձայն, Ռուսիա այդ խարխիւներէն դուրս պիտի գայ մինչեւ 1 Յունիս 2001: Բանակցութիւններուն պիտի վաւերացուի այս վերջին երկու խարխիւներու պարունակի յստակ ժամանակացոյցը:

### ԽԱՉԲԱՌԻ ԹԻԻ 4816

Table with 10 columns and 10 rows for the 4816 lottery. Header: Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱՋԱՐԵԱՆ

Table with 2 columns: ԵՐՈՒՊԱԿԱՆ and ՈՒՂԱՆԱՅԵԱՑ. Lists lottery results for various categories.

Table with 10 columns and 10 rows for the 4815 lottery. Header: ԹԻԻ 4815

### ԱՐԱԲ ԱՐՏԱՔԻՆ ...

Շարունակուած Ա. Էջէն

գօտիները», ինչպէս նաեւ՝ արաբական երկիրներէն կը պահանջէ վերսկսիլ դէպի Իրաք օդանաւային կանոնաւոր թռիչքներուն:

### ԿԵՆՄԵՐՈՎԸ ԿԸ ՍԿՍԻ ՎԱՐԸ

Իրաքի հարցին գծով լարուած այս մթնոլորտին մէջ է, որ Ամման կը հասնին արաբ ղեկավարներն ու բարձրաստիճան պաշտօնատարները, որոնք պիտի մասնակցեն երկօրեայ վեհաժողովին: Արաբ ղեկավարները մեծ մասամբ ներկայ պիտի ըլլան վեհաժողովին: Լիպիսի ղեկավար Մուսամար Քապաֆի, որ չէր մասնակցած Հոկտեմբերին տեղի ունեցած արտակարգ վեհաժողովին՝ հեզնելով անոր թոյլ բանաձեւերը, այս անգամ ներկայ պիտի ըլլայ:

Իրաքի նախագահ Սաւատան Հիւսէյն, որ 1990ի պատերապսներէն ի վեր երկրէն չէ հեռացած, այս անգամ եւս պիտի բացակայի, հակառակ անոր որ վեհաժողովին օրակարգին գլխաւոր հարցերէն մէկը Իրաքն է: Իրաքեան պատուիրակութիւնը կ'առաջնորդէ յեղափոխական իրամասնատարութեան խորհուրդի փոխ նախագահ Իպպէթ Իպրահիմ, որ Ամման ժամանումին յայտարարեց, որ Սաւատանէն կարելի էր եւ պատմական պատգամ մը պիտի փոխանցէ վեհաժողովին:

Իրաքի կողմէն, արաբ ղեկավարները պիտի քննարկեն պաղեստինեւիստայի տագնապը: Կը նախատեսուի, որ այդ ուղղութեամբ տարակարծութիւններ չարտայայտուին եւ բոլորը միացեալ կեցուածքով մը պօրավիզ կանգնին պաղեստինցիներուն: Կը նախատեսուի, որ վեհաժողովը վաւերացնէ պաղեստինեան իշխանութեան տրամադրուելիք անսակաւ 40 միլիոն տոլարի ծրագիր մը, որ ի պօրու պիտի դառնայ յառաջիկայ մէջ ամիսներուն համար:

Սուրիայ կը պահանջէ, որ արաբական աշխարհը ամբողջական պոլոքոք յայտարարէ Իսրայէլի դէմ: Սակայն Յորդանան եւ Եգիպտոս, որոնք խաղաղութեան համաձայնագիրներ ստորագրած են Իսրայէլի հետ, համաձայն չեն այսպիսի խիստ ու ծայրայեղական առաջարկներուն: Կը նախատեսուի նաեւ, որ վեհաժողովը Արաբական Լիգայի ընդհանուր քարտուղար նշանակէ Եգիպտոսի արտաքին գործոց նախարար Ամր Մուսան՝ փոխարինելու համար Իսմայիլ Ապտի Մեկիտը, որուն նստաշրջանը կ'աւարտի այս տարի: